
**ԽՈՒԱՆ ԳՈՅԹԻՍՈՒՈՆ ԵՎ ԻՍՊԱՆԱԿԱՆ
ԱՐՁԱԿԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ**

ԱԶԳՈՅԱՆ Ռ. Հ.

Իսպանիայի պատմության մոայլ ժամանակաշրջանը, երբ ֆրանկոյականները եկել էին իշխանության, և ամբողջ գրականությունն ի սպաս էր դրված ֆրանկոյական բռնակարգի գաղափարախոսությանը, համընկավ Խուան Գոյթիսոլոյի (1931 թ.) երիտասարդության տարիների հետ, երբ նա առաջին քայլերն էր անում գրական ասպարեզում: 1954 թվականին, երբ Գոյթիսոլոն 23 տարեկան էր, լույս է տեսնում նրա առաջին՝ «Ձեռքերի ճարպկություն» (*Juegos de manos*, 1954) վեպը, որն արագ ճանաչում է բերում երիտասարդ գրողին: Առաջին գրական հաջողությունից հետո 1950-ական թվականների երկրորդ կեսին մեկը մյուսի հետևից լույս են տեսնում «Թախիծ դրախտում» (*Duelo en el paraíso*, 1955), «Կրկես» (*El circo*, 1957), «Տոներ» (*Fiestas*, 1958) և «Ալերախություն», (*La resaca*, 1958) վեպերը, որոնք միավորվում են «Տեսլային վաղը» (*El mañana afimero*) շարքի մեջ:

Նշված վեպերի հիմնական թեման Իսպանիայի քաղաքացիական և Երկրորդ համաշխարհային պատերազմներն են: Նրա հերոսները տարբեր խավերի, տարբեր տարիքի մարդիկ են, որոնց ճակատագրերը հաճախ միահյուսվում են երկրի ողբերգական պատմությանը: 1950-ականների կեսերի իսպանական գրականությունը դժվար է ճիշտ ընկալել՝ առանց հաշվի առնելու դրան նախորդած ժամանակաշրջանի՝ 1940-ական թվականների գրական զարգացումները: Ինչ վերաբերում է Գոյթիսոլոյի արձակին, ապա դրա արմատները պետք է փնտրել ոչ միայն 1940-ականների, այլև դարասկզբի իսպանական գրականության մեջ:

Երիտասարդ ու տաղանդաշատ արձակագիրն առաջին հերթին հրապուրվում է իսպանացի ավագ սերնդի գրողների և, մասնավորապես, «1898 թվականի սերնդի» ստեղծագործություններով: Բազմաթիվ էսսեներում Գոյթիսոլոն անդրադառնում է դարասկզբի իսպանական գրականությանը՝ առանձնակի կարևորություն տալով գրականության զարգացման գործում լուրջ ավանդ ունեցած այդ գրողներին՝ Մ. դե Ունամունոյին, Խ. Ռուիզին, Ա. Գանիվեթին, Պ. Բարոխային, Ա. Մաչադոյին:

«1898 թվականի սերնդի ժառանգությունը» հոդվածում Գոյթիսոլոն նշում է, որ 1936-1939 թթ. քաղաքացիական պատերազմը կործանարար ազդեցություն

ունեցալ գրականության ու մշակույթի զարգացման վրա: Դա ավելի ուշ հասկացան նաև ինքնակոչ իշխանությունները, որոնք պատերազմից հետո ամեն կերպ ձգտում էին վերականգնել Բուպանիայի կապը երկրի անցյալի հետ, որը խզվել էր պատերազմի հետևանքով: «...Պատմական կապը խզվել էր զենքի ուժով և նրանց քմահաճությամբ, ովքեր դրա օգնությամբ ձգտում էին գահ բարձրացնել չնչին կուռքերին: Կամուրջների վերականգնումը, որը մեզ կապում էր մեր դարավոր ավանդույթներին, դիտվում էր ոչ միայն որպես ցանկալի գործողություն, այլև բացարձակ անհրաժեշտություն»¹:

Մինչդեռ 1940-ական թթ. Բուպանիայի գրական ասպարեզում հանդես էին գալիս շատ քիչ գրողներ, որոնցից աչքի էին ընկնում Կամիլո Խոսե Սելան (1916 թ.), Կարմեն Լաֆորեթը (1921 թ.) և Խուան Անտոնիո դե Սունսունեգին (1901 թ.): Որոշ գրականագետներ այս տասնամյակն անվանում են «գորշ 1940-ականներ», ինչը հուշում է, որ դրանք իսպանական գրականության անկումային տարիներն էին:

Սկզբնական շրջանում Կամիլո Խոսե Սելային բնորոշ չէր ընդդիմադիր կեցվածքը: Նա մասնակցել էր քաղաքացիական պատերազմին Ֆրանկոյի բանակում: Մական այն, ինչ Մադրիդի համալսարանի ուսանող Սելան տեսավ ռազմաճակատում, խոր հիասթափություն պատճառեց նրան, և դա իր արտացոլումը ստացավ «Պասկուալ Դուարտեյի ընտանիքը» (1942 թ.) վեպում:

Ի տարբերություն վերացական թեմաներով ստեղծագործող գրողների՝ Խոսե Սելան սկզբունքորեն կողմնակից էր ժամանակակից Բուպանիայի իրականության իրատեսական պատկերմանը: «Սելան, - տվեց նոր ծիլ, այսպես կոչված, սոցիալական գրականությունը, որը նույնքան հին է, որքան աշխարհը»²:

Ավագ գրչրնկերոջ այս տեսակետը պաշտպանում է նաև Գոյթիսոլոն. «Հասարակության մեջ, որտեղ մարդկային հարաբերությունները խորապես անբնական են, իրատեսությունն անհրաժեշտություն է»³:

Խոսե Սելայի «Պասկուալ Դուարտեյի ընտանիքը» հիքավի դասվում է «բրոնությունների վեպ» շարքին, և դա օրինաչափ է, քանի որ «հետպատերազմյան տարիների մեր վեպի ընդհանուր ուղղվածությունը նշանավորվում է բռնութ-

¹ J. G. El Furgón de cola, Paris, 1967, p. 18.

² Cela C. J. Dos tendencias de La nueva literatura española (Papeles de Son Armadans), 1962, N LXXIX, p. 15).

³ Juan Goytisolo. España y Los Españoles. Barcelona, 1979, p. 107.

յուններով, - գրում է Սելան հոդվածներից մեկում, - և մի շարք գրքերում բռնությունը հույսի շողի տեղ չի թողնում»⁴:

Բռնության թեման զգալի տեղ է զբաղեցնում նաև Գոյթիստոյի 1950-ական թվականների ստեղծագործություններում, մասնավորապես՝ «Ձեռքերի ճարպրկություն», «Ալեքսիություն» և «Թախիծ դրախտում» վեպերում: Նկարագրելով բռնությունները՝ երկու գրողներն էլ եզրահանգում են, որ դրանց մեղավորը ոչ միայն բռնակարգն է, այլև իսպանական հասարակությունը:

1948 թ. Խոսե Սելան գրում է «Ճամփորդություն դեպի Ալ-կարիա» գիրքը, որում նախանշվում է գրականության այն նոր՝ «օբյեկտիվ շարադրման» ոճը, որով իսպանական գրականությունը պիտի ընթանար 1950-ական թվականների կեսերից: Գրքում Սելան իրատեսական պատկերացումներով հակադրվում է ժամանակակից մյուս գրողներին, որոնք ներկայացնում էին այդ իրականության սուբյեկտիվ պատկերները: Անդրադառնալով իր ստեղծագործությանը՝ նա գրում է. «Այստեղ նախ և առաջ գրողը չի մոլորեցնում ո՛չ իրեն, ո՛չ ուրիշներին»⁵:

Ըստ էության, Գոյթիստոյի ստեղծագործությունները հաճախ սյուժետային ու գաղափարական առումով դառնում են Սելայի վեպերի շարունակությունը՝ ամբողջացնելով իսպանական հասարակության արատավոր դրսևորումների համայնապատկերը: Այս գրողներին միավորում է նաև այն, որ երկուսն էլ չեն ընդունում իրենց ժամանակի Իսպանիան և երկրի ապագայի հանդեպ տրամադրված են հոռետեսորեն:

1940-ական թվականներին իսպանական գրականությունը նշանավորվեց Կարմեն Լաֆորետի «Ոչինչ» վեպով (1944), որի համար գրողը ստացավ «Նադալ» գրական մրցանակը: Վեպը գրելիս Լաֆորետը չունեի կյանքի այն փորձը, ինչ Սելան: Լաֆորետին, ինչպես և Սելային, բնորոշ էր էկզիստենցիալիստական աշխարհընկալումը: Լաֆորետի վեպի վերնագիրը՝ «Ոչինչը», մեկնաբանվում է հենց այդ փիլիսոփայական գաղափարախոսության դիրքերից: «Ոչինչը» մարդկային գորշ կենցաղ է, որն անհատին հասցնում է հոգևոր մահվան:

Վեպում, նկարագրելով մի տիպիկ իսպանական ընտանիքի դրաման, հեղինակը փորձում է գտնել այդ ընտանիքի այլասերման և հոգևոր կործանման պատճառները: Նկարագրելով ընտանեկան վեճերը՝ Լաֆորետը անուղղակի, սակայն պարզորոշ ցույց է տալիս, որ ընտանիքի ներկա կացությունը 1936-1939 թվականների քաղաքացիական պատերազմի հետևանքն է: Պատերազմը ոչ միայն սնանկացրել է այս ընտանիքը, այլև խեղել յուրաքանչյուրի ճակատա-

⁴ Cela C. J. *Dos tendencias de la nueva literatura española (Papeles de Son Armadans, 1962, octubre)*.

⁵ Cela C. J. *Obras Completas, L. 1, Barcelona, 1962, p. 417.*

գիրը: Պատերազմի հետևանքով ընտանիքի բոլոր անդամները կորցրել են իրենց կյանքի իմաստը, ապրում են միայն ներկայով՝ որևէ հույս չկապելով ապագայի հետ: Նրանցից յուրաքանչյուրը կործանված մարդ է: Սա է պատճառը, որ, ի վերջո, ընտանիքը տրոհվում է և քայքայվում:

Վեպում հեղինակը հակադրում է իսպանացիների ավագ ու կրտսեր սերնդի ներկայացուցիչներին՝ ցույց տալով, որ պատերազմից վախեցած ու մեկուսացած ավագ սերունդը անկարող է նեցուկ լինել կրտսեր սերնդին:

Հաջորդ «Կղզին ու դները» վեպում (1952 թ.) Կ. Լաֆորետը նկարագրում է երիտասարդ սերնդի խոր հիասթափությունը, որը ստիպում է ապրել «կղզիացած» կյանքով: Հեղինակի այլաբանությունն այս վեպում ակնհայտ է, քանի որ խոսքն այստեղ ոչ միայն Գրան-Կանարիա կղզու մասին է, որտեղ տեղի են ունենում գործողությունները, այլև հերոսուհու հոգևոր աշխարհի, որը գրողը նմանեցնում է կղզու:

Այս առումով այն համեմատության եզրեր ունի Գոյթիսոլոյի «Կրկես» վեպի հետ, որի հերոսները ևս ապրում են «կղզիացած» կյանքով: Սակայն, ի տարբերություն Լաֆորետի հերոսուհու, Գոյթիսոլոյի վեպում հերոսների մեկուսացումն ազատ ընտրություն է: Գոյթիսոլոն իր վեպում ոչ թե ցավում, այլ հեզնում է պորտաբույծ բարձրաշխարհիկ հերոսներին, որոնք կտրվել են իսպանական իրականությունից և, իրենց ներաշխարհում պարփակվելով, գոյատևում են՝ առաջնորդվելով անասնական կրքերով:

Չնայած 1950-1960-ական թվականներին բռնապետությունը շարունակում էր գործել սովոր մեթոդներով՝ այս ժամանակահատվածում ինչպես ավագ, այնպես էլ կրտսեր սերնդի գրողները (Խ. Գոյթիսոլո, Խ. Լոպես Պաչեկո, Ա. Լոպես Սալինաս, Ռ. Սանչես Ֆերլոսիո, Ա. Մ. Մատուտե, Խ. Գարսիա Օրթելանո) ստեղծում են մեծ թվով արժեքավոր ստեղծագործություններ: «Դարամիջյան սերունդը», ինչպես հաճախ անվանում են նրանց, հետևելով իսպանական գրականության լավագույն ավանդներին, բերեց նոր գաղափարներ և նոր գրելաոճ: «Դարամիջյան սերնդի» գրողները ապրել ու ծնվել էին երկրի համար ողբերգական՝ սովի ու պատերազմի ժամանակաշրջանում, սակայն հետպատերազմյան ժամանակաշրջանը, ըստ Ալֆոնսո Գրոսոյի, նույնչափ «սարսափելի էր, որչափ բուն պատերազմը: Խաղաղության առաջին սարսափները, չկան արկեր, չկան տազնապներ, միայն վաղ առավոտյան պատի տակ գնդակահարություններ են, և ուտելու գրեթե ոչինչ չկա»⁶:

⁶ Grosso A. *La Zanja*, Barcelona, 1961, p. 28.

Սրանով է բացատրվում, որ ինչպես Գոյթիսոլոն, այնպես էլ մյուսները, նկատի ունենալով եղբայրասպան քաղաքացիական պատերազմը, իրենց վեպերում շատ հաճախ արդիականացնում են աստվածաշնչյան Աբելի ու Կայենի պատմությունը: «Իսպանիան ու իսպանացիները» գրքի «Կայենն ու Աբելը 1936-1939 թվականներին» հոդվածում Գոյթիսոլոն մասնավորապես նշում է. «1936-1939 թվականների իսպանական քաղաքացիական պատերազմը անվիճելիորեն համաշխարհային հանրությունը բաժանող իրադարձություններից մեկն է»⁷:

«Դարամիջյան սերնդի» գրողներից ոչ մեկն իր ստեղծագործություններում չի մոռանում երկրի ողբերգական անցյալը: Միաժամանակ, ֆրանկոյական գրաքննության պայմաններում առաջադեմ իսպանացի գրողների համար դժվար էր անաչառ ներկայացնել այդ անցյալը, որն ուղղակի կապված էր նույն վարչակարգի անցյալում գործած վայրագությունների հետ: Այս հակասությունն էլ հենց հասցրեց տիպիկ իսպանական «օբյեկտիվ արձակ» գրական ոճի ստեղծմանը, որի հիմնադիրներից ու գլխավոր տեսաբաններից մեկը Գոյթիսոլոն էր:

Ըստ Գոյթիսոլոյի՝ իսպանական գրականության զարգացմանը խոչընդոտեց Օրտեգաի-Գասետի տեսությունը, որը իսպանացի գրողներին կտրեց ժողովրդի իրական կյանքից, մերժեց այդ կյանքի պատկերման կարևորությունը: «Մերժելով սոցիալական ու մարդ-կային խնդիրները, - գրում է Գոյթիսոլոն, - Օրտեգան առաջարկում է, որ վեպը ձգտի միայն դեպի «դժվար մաքրություն», որն իր գոեհկությանը հանդերձ, հեռու է իրական կյանքից»⁸: Հակադրվելով անվանի հայրենակցին՝ Գոյթիսոլոն մարդկության ու գրականության երկու ուղի է տեսնում՝ կա՛մ պետք է «մարդկայնանալ», կա՛մ «կործանվել»:

Գոյթիսոլոյի խոսքն առնչվում է նաև Օրտեգաի-Գասետի ավելի ուշ գրված և հետմահու հրապարակված «Մարդը և մարդիկ» (1957 թ.) աշխատությանը, որում հեղինակը ներկայացնում է իր էկզիստենցիալիստական աշխարհընկալումը: Օրտեգան այստեղ առաջ է քաշում մի դրույթ, ըստ որի՝ չնայած մարդն ապրում է հասարակության մեջ, սակայն նրա իրական կեցությունը միայնությունն է: Ըստ Օրտեգայի՝ անհատի «եսի» վրա արտաքին աշխարհի ցանկացած ազդեցություն հանգեցնում է այդ աշխարհից նրա օտարացման: Օտարացումը խլացնում, կուրացնում է մարդուն, ստիպում, որ նա գործի մեխանիկորեն, խելացնոր լուսնոտի պես⁹:

⁷ Juan Goytisolo. *España y Los Españoles*, Barcelona, 1979, p. 408.

⁸ Juan Goytisolo. *Para una Literatura nacional popular* (Ínsula, 1959, enero, p.18).

⁹ Ortega y Gasset J. *El hombre y La gente*, Madrid, 1957, p. 36.

Մեփական «եսը» չկորցնելու նպատակով փիլիսոփայական անհատին առաջարկում է ինքնական մեկուսանալ հասարակությունից, մարդկանցից և ապրել հարուստ ներաշխարհում պարփակված: Հենց դա է, ըստ Օրտեգայի, անհատի իրական ու միակ հնարավոր կացութաձևը:

Միջամտելով Գասետի ու Գոյթիստոյի հեռակա բանավեճին՝ գրականագետ Գիլերմո դե Տորեն մերժում է վերջինիս այն տեսակետը, թե գրականությունը պետք է լինի «ազգային ու ժողովրդական», և պաշտպանելով Գասետի տեսակետը՝ գրում է. «Մի թե մեր վիպասանն այսօր դա հնարավոր ու պիտանի է գտնում: Մի թե Գոյթիստոն իրոք կարծում է, որ այսօր կարելի է նման ծրագրային իդեալ առաջ քաշել: Ինչ վերաբերում է ժողովրդականությանը, ապա մեզ համար այդ բառի հետևում թաքնվածը չափազանց շատ խավար է, որպեսզի այն հնարավոր լինի առանց վերապահումների ընդունել որպես գրական ծրագիր»¹⁰:

Չնայած տարբեր կողմերից իր մասին հնչեցվող քննադատական խոսքերին՝ Գոյթիստոն ընտրում ու մինչև վերջ պաշտպանում է իր տեսակետը և գրում ժողովրդի համար ու ժողովրդի մասին: Միաժամանակ, հաշվի առնելով իսպանական իրականության առանձնահատկությունները, Գոյթիստոն առաջ է քաշում այն դրույթը, որ իսպանական գրականությունը, կամա թե ակամա, պետք է տարբերվի եվրոպական այլև համաշխարհային գրականություններից: Այդ գաղափարի հիմնավորումը գտնում ենք Գոյթիստոյի բազմաթիվ հոդվածներում ու էսսեներում, որոնք ամփոփված են երեք՝ «Վերջին վագոնը» (1967 թ.), «Իսպանիան ու իսպանացիները» (1979 թ.) և «Ազատություն, ազատություն, ազատություն» (1978 թ.) ժողովածուներում:

Ամփոփելով ստեղծված հասարակական, գրական և մշակութային իրավիճակը՝ կարելի է փաստել հետևյալը. Գոյթիստոն և նրա սերնդակիցները, շարունակելով նախորդ դարավերջի իսպանացի գրողների ավանդույթները, ստիպված էին փնտրել դեպի ճշմարտություն տանող ուղին՝ անցնելով բազմաթիվ արգելքների և խոչընդոտների միջով: Գրաքննության այդ դաժան պայմաններում ստեղծված «օբյեկտիվ արձակը» կոնկրետ սոցիալ-քաղաքական իրավիճակի ծնունդ էր, որի առաջին և սկզբունքային հետևորդներից մեկը Խուան Գոյթիստոն էր, որը կարողացավ առաջ քաշել ժամանակի հրատապ ու լուրջ հարցեր՝ ներկայացնելով դրանք յուրատիպ կերպով: Դա լուրջ հայտ էր իսպանական գրականություն մուտք գործող տաղանդաշատ գրողի

¹⁰ De Torre G. Los puntos sobre algunas "ies" novelísticas (Ínsula, 1959, mayo, p. 14).

կողմից, որը մեծ դեր ունեցավ իսպանական արձակի լավագույն ավանդույթների պահպանման և դրանց հետագա զարգացման գործում:

ХУАН ГОЙТИСОЛО И ТРАДИЦИИ ИСПАНСКОЙ ПРОЗЫ

АЗРОЯН Р. А.

Резюме

Начало литературной деятельности Хуана Гойтисоло восходит к эпохе франкистов. Во многих своих эссе Гойтисоло возвращается к теме испанской литературы начала эпохи, нашедшей отражение в произведениях М. де Унамуно, Х. Руиза, А. Ганивета, П. Барохи и А. Мачадо, сыгравших важную роль в развитии испанской литературы. Гойтисоло и писатели его поколения, продолжая традиции испанских писателей конца прошлого века, в условиях жесткой цензуры создавали “объективную прозу”, откликаясь на актуальные и серьезные проблемы действительности.

JUAN GOYTISOLO AND SPANISH PROSE TRADITIONS

R. AZROYAN

Abstract

The harsh period in Spanish history, when the Francoists came to power, coincided with Juan Goytisolo's entry to literature as a young writer. Goytisolo was fascinated by the works of the senior generation. Most of his essays dwell on the literature dating to the beginning of the century highlighting works by M. de Unamuno, J. Ruiz, A. Ganivet, P. Baroja and A. Machado, who had their significant contribution to literature.

Following the traditions of the writers of the past century, Goytisolo and the writers of the same generation had to overcome many obstacles while looking for the truth. Goytisolo, who managed to highlight serious issues, was the first and principal advocate of “objective prose”, born in the period of strong censorship due to the social-political situation in the country. Hence, the young writer's role was substantial in maintaining the best traditions of Spanish prose and securing its further development.